ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ 41-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ս.թ. հուլիսի 9-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կայացավ Երիտասարդ արևելագետների 41-րդ ամենամյա գիտաժողովը, որը նվիրված էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր, վաստակաշատ հայագետ **Արտակ Մովսիսյանի** հիշատակին: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, պ.գ.թ., դոցենտ Ռոբերտ Ղազարյանը:

Գիտաժողովին ներկա էին և ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ՀՀԳԲ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Քոսյանը: Նրանք իրենց խոսքում բարձր գնահատեցին Արտակ Մովսիսյանի ավանդը պատմագիտության զարգացման ասպարեզում՝ կարևորելով այն եզակի ժառանգությունը, որ թողել է պատմաբանը հաջորդ սերունդներին:

Գիտաժողովին մասնակցեցին շուրջ 40 գիտաշխատողներ, մագիստրոսներ, ասպիրանտներ Հայաստանի տարբեր գիտական և կրթական հաստատություններից: Մասնակիցների զեկուցումների թեմաները վերաբերում էին տարբեր արդի հիմնախնդիրների, պարունակում էին գիտական նորույթ, իսկ ելույթներն աչքի էին ընկնում ուշագրավությամբ և գիտականությամբ:

Գիտաժողովի ավարտին տեղի ունեցավ ամփոփում և վկայագրերի հանձնում:

Գիտաժողովին ներկայացված լավագույն զեկուցումները կհրատարակվեն ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի՝ «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» գիտական հոդվածների ժողովածուի հերթական համարում:

THE 41TH CONFERENCE OF YOUNG ORIENTALISTS

The 41st Annual Conference of Young Orientalists was held at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia on July 9, 2021. It was dedicated to the memory of **Artak Movsisyan**, honored Armenologist, leading researcher of the Department of Ancient Orient of the Institute of Oriental Studies of NAS RA, Doctor of Sciences (history), professor. Robert Ghazaryan, the director of the Institute made an opening speech.

Yuri Suvaryan, Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences of NAS RA, academician of NAS RA; Nikolay Hovhannisyan, advisor to director of the Institute of Oriental Studies of NAS RA, Corresponding Member of NAS RA; Ashot Melkonyan, director of the Institute of History of NAS RA, Academician of NAS RA; Edik Minasyan, dean of the Faculty of History of YSU, Doctor of Sciences (history), professor; and Aram Kosyan, Head of the Department of Ancient Orient of the Institute of Oriental Studies of NAS RA, Doctor of Sciences (history), professor were present at the conference and made opening speeches. In their speech, they highly appreciated Artak Movsisyan's contribution to the development of historiography, emphasizing the unique legacy that the historian left to future generations.

The conference was attended by about 40 researchers, graduate and postgraduate students from different scientific and educational institutions of Armenia. The topics of the participants' reports were related to various current issues, contained scientific novelty, and the speeches were remarkable and were distinguished by scientific approach.

At the end of the conference certificates were handed out.

The best reports presented at the conference will be published in the next issue of the collection of scientific articles of the Institute of Oriental Studies of NAS RA - "Near East: History, Politics, Culture".